

ԿԱՌԱՆԵՆ ԶԱՉԱՆԻ

ՀԱՅ ԶՐԴԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (Զրդագիտական առաջին գիտաժողովը)

Հանրահայտ իրողություն է, որ յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի ձևավորումը տևական գործընթաց է: Անցյալից ժառանգելով սեփականը և յուրացնելով այլ մշակույթների առաջավոր բաղադրատարրերը, ժողովուրդը էլ ավելի է առաջ մղում իր ազգայինը: Ուստի պետք է խնամքով վերաբերվել ոչ միայն ազգային ավանդական մշակույթին, այլև ընտրել, զարգացնել ու գնահատել բարձր մշակույթ ունեցող մյուս ժողովուրդներից փոխառածը:

Ուսումնասիրելով քրդական մշակույթի առաջադիմությանը վերաբերող հարցերը, միանշանակ կարող ենք ասել, որ աշխարհի ոչ մի քաղաքակիրթ ժողովուրդ իր մշակութային պատմությամբ ու իր գործնական նպատակապահ քայլերով, այնպիսի ազդեցություն չի ունեցել որևիցե ժողովրդի վրա, որքան հայկական մշակույթը և հայ մտավորականությունը քրդական մշակույթի վրա: Խ. Աբովյանի, Մ. Տիգրանյանի, Խրիմյան Հայրիկի, Յ. Շահպազյանի, Ս. Եղիազարյանի, Լեոի, Հ. Օրբելու եւ շատ ու շատ այլ լայնախոհ հայ մտավորականների գիտական գործունեության արդյունքում, քրդական մշակույթում ի հայտ եկավ մի նոր գիտական ուղղություն— քրդագիտություն, որն իր մեջ ամփոփում է մի ողջ մշակույթի ուսումնասիրության խնդիրները¹: Նշելի է նաեւ մեկ այլ կարեւոր հանգամանք. քրդական մշակույթի զարգացմանը աջակցել են ոչ միայն առանձին հայ մտավորականներ, այլև անգնահատելի էր հայոց պետականության վերականգնումից հետո Հայաստանի կառավարության պետական մոտեցումը քրդական մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը: Իր բազմաթիվ գործնական որոշումներով, առաջադրանքներով, ցուցումներով Հայաստանի կառավարությունը նպաստել է Հայաստանի հանրապետության քուրդ համայնքի ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ մշակութային կյանքի բարգավաճմանը, որը մի նոր փառու հանդիսացավ աշխարհի ողջ քրդության համար:

1933 թ. Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտում հիմնվեց քրդական լեզվագիտական մասնաճյուղը, որը զբաղվում էր հիմնականում քրդերեն լեզվի եւ բանահյուսության հարցե-

րով և որին աջակցում էին հայ անվանի գիտնականներ Հ. Օրբելին, Հ. Աճառյանը, Գ. Մեակը, Ա. Խաչատրյանը, Ա. Ղարիբյանը, Մ. Օհանջանյանը, Ա. Ղանալանյանը, Շ. Կուժիկյանը եւ շատ ուրիշներ:

Քրդագիտության զարգացման հարցերը գիտական բարձր մակարդակով քննարկելու նպատակով Հայաստանի կենտրոնական Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտին եւ նոր այբուբենի կոմիտեին հանձնարարեց Երեւանում հրավիրել քրդագիտական գիտաժողով:

Այդ նույն թվականին կուլտուրայի պատմության ինստիտուտը հայ և քուրդ գիտնականներից կազմակերպում է հանձնաժողով (ղեկ.՝ Ա. Շամիրով), որը մեկնում է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի քրդական շրջանները ուսումնասիրելու քրդերեն կուրմանջի բարբառի առանձնահատկությունները²: Պետք է նշել, որ այս հանձնաժողովի գործունեությունը դրական ներգործություն ունեցավ կոմիտեի կազմակերպման ընթացքի վրա:

1933 թ. հուլիսի 16-ին Հովսեփ Օրբելու, Ասատուր Խաչատրյանի, Մ. Օհանջանյանի, Մանթրոսյանի, Բզնունու, Հ. Ջնդու, Ա. Ավդալի մասնակցությամբ տեղի ունեցավ նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտի նիստ, որը որոշեց քրդագիտական Համամիութենական առաջին գիտաժողով հրավիրել 1934 թ. հուլիսին: Գիտաժողովը մաեւ ամփոփելու էր վերջին 10 տարում քրդական մշակութային կյանքում տեղի ունեցող աշխատանքները³:

Գիտաժողովի նախօրեին հանրապետության մամուլում տպագրվեցին զեկուցումների թեզիսները, Հայաստանի կուլտուր-հիմնարկներ ուղարկվեցին հրավիրատուներ: Հանրապետության գիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունները ակտիվորեն մասնակցեցին քրդագիտական գիտաժողովի նախապատրաստման աշխատանքներին: Միջոցառումներ մշակվեցին քուրդ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, բանահյուսության, ազգագրության եւ այլ հարցերի բազմակողմանի ուսումնասիրման համար:

Ծանոթանալով գիտաժողովի թեզիսներին, հայ գիտնականները կոմկրետ առաջարկություններ արեցին այնտեղ քննարկվելիք հարցերի կապակցությամբ: Նրանք հիմնականում կանգ էին սանում քրդերեն գրական լեզվի, ուղղագրության, տերմինաբանության, բանահյուսության հարցերին:

Պրոֆեսոր Ա. Խաչատրյանը «Համամիութենական քրդագիտական կոմիտեին» խորագրով հեղվածում նշում էր Հայաստանում քուրդ ժողովրդի մշակույթի առաջընթացը, որը իրավամբ թույլ էր տալիս ասելու, որ միայն Հայաստանում կարող էր այդպիսի գիտաժողով տեղի ունենալ, ուր բոլոր հնարավոր պայմաններն են ստեղծված քուրդ ժողովր-

դի մշակույթի զարգացման համար: Այնուհետև նա առաջ է քաշում քրդերեն լեզվի ու գրականության հարցերը խորապես ուսումնասիրելու խնդիրը⁴:

Նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտի գիտքարտուղար, պրոֆեսոր Մելիք Օհանջանյանը իր «Հավաքել քրդական բանահյուսությունը» հոդվածում նշում է, որ կոնֆերանսը պետք է նաև իր ուշադրությունը բևեռի քրդական բանահյուսության հարցերին. «Քրդական բանահյուսությունը, – գրում էր նա, – հարուստ ու բազմաբովանդակ է, եթե քուրդ գրողները ցանկանում են էլ ավելի հարստացնել իրենց լեզուն, պետք է լավ ծանոթ լինեն քրդական բանահյուսությանը, նրա հեքիաթին, բեյթերին, երգերին, քրդական բանահյուսության շտեմարանը լի է դրանով: Եվ ոչ միայն քուրդ գյուղացուց պետք է հավաքել քրդական բանահյուսությունը, այլ նաև Թուրքիայից գաղթած հայ փախստականներից, որոնք հոյակապ տիրապետում են քրդական բանահյուսությանը, եւ նույնիսկ թարգմանել են հայերեն»⁵:

«Ռ-յա թագայի» նույն համարում տպագրվել էր քուրդ գրող, ազգագրագետ Ամինե Ավդալի. «Մի քանի հարցեր քրդական այբուբենի եւ ուղղագրության մասին» հոդվածը: Հեղինակը անդրադառնում է քրդերեն լատինատառ այբուբենի օգտագործման եղանակներին ու քրդերեն լեզվի ուղղագրությունը: Առաջարկվում է կոնֆերանսում անդրադառնալ այդ հարցերին:

Մեկ այլ համարում տպագրվել էր պրոֆեսոր Ա. Խաչատրյանի հոդվածը «Քրդերեն բարբառները եւ քրդերեն գրական լեզվի ստեղծման մի քանի հարցերը» խորագրով: Հեղինակը խնդիր էր դնում խորապես անդրադառնալ քրդերենի լեզվաշինության հարցերին⁶:

«Ռ-յա թագա» թերթը քրդագիտական գիտաժողովի հրավիրմանը անդրադարձել է առաջնորդող հոդվածով՝ այն անվանել պատմական իրադարձություն: Տպագրվել է նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտի տնօրեն Հ. Ջոբյանի հոդվածը «Համամիութենական քրդագիտական կոնֆերանսը եւ նրա խնդիրները» խորագրով:

Արարատ Ղարիբյանը «Ռ-յա թագա» թերթում հանդես գալով «Քրդագիտական կոնֆերանսը» ծավալուն հոդվածով, նշում էր, որ հարկավոր է գիտաժողովում գործնական միջոցառումներ ձեռնարկել՝ քրդերեն գրական լեզվի ստեղծման համար, որ այդ ուղղությամբ հայ գիտնականները պետք է իրենց բարեկամական ձեռքը մեկնեն նորաստեղծ քրդական մշակույթին, օգնեն թե՛ լեզվի, թե՛ գրականության եւ թե՛ պատմության վերաբերող հարցերում:

Իր «Քրդերեն գրական լեզվի մի քանի առանձնահատկությունների մասին» հոդվածում, պրոֆեսոր Գուրգեն Մեւակը, անդրադառնալով լեզվաշինության մի քանի հարցերի, առաջնությունը տալիս է կուրմանջի

բարբառին եւ խոստում նրա առանձնահատկությունների մասին, որով եւ նրա կարծիքով պետք է զարգանա քրդական գրականությունը:

Գիտաժողովի բացումը վերածվեց հայ եւ քուրդ ժողովուրդների բարեկամության մի իսկական տոնախմբության, որին մասնակցում էին ոչ միայն հայ եւ քուրդ մտավորականներ, այլեւ մոտ 80 պատգամավորներ, գիտնականներ Լենինգրադից, Վրաստանից, Ադրբեջանից եւ միջինասիական հանրապետություններից: 1934 թ. հուլիսի 9-ին՝ կոնֆերանսի բացման օրը, Երեսնի Կուլտուրայի տանը, ինչպես «Ռյա թագա» թերթն էր նշում. «այդ օրը մի մեծ տոնախմբություն էր, դաշիճում հնչում էր հայկական եւ քրդական երաժշտության հուզիչ մեղեդին: Դաշիճի միջանցքներում բացվել էին քրդական մշակույթին նվիրված ցուցափեղկեր: Իրոք, այդ օրը քրդական մշակույթի տոնակատարման օրն էր»¹:

Իր բացման խոսքում Հայաստանի Կենտգործկոմի նախագահ Ս. Մարտիրոսյանը նշում է՝ «Ես ի սրտե ողջունում եմ քրդագիտական կոնֆերանսը... Քուրդ ժողովուրդը Հայաստանում հենց իր լեզվով, իր գիր ու գրականությամբ, իր համար նոր կուլտուրա է ստեղծում: Նա դայրոցներ է բացում, հրատարակում է թերթ, իր գրական լեզուն է ստեղծում ու առաջ մղում... Ես հույս եմ հայտնում, որ կոնֆերանսը կպարգաքանի օրակարգի ամեն մի հարց եւ նոր թափ կհաղորդի քրդական մշակույթի առաջընթացին, հատկապես քրդագիտությանը վերաբերվող հարցերին, իսկ Հայաստանի կառավարությունը կաջակցի ամեն մի հարցի իրագործելու»²:

Գիտաժողովում ընթերցվեց Հայաստանի կոմկուսի կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Ա. Խանջյանի ողջույնի խոսքը, որում առաջարկվում էր այսուհետեւ էլ ավելի զարկ ապա քրդական մշակույթին, որ Հայաստանում ձեռնարկվեն բոլոր միջոցառումները էլ ավելի ամրապնդելու հայ եւ քուրդ ժողովուրդների բարեկամությունը³:

Գիտաժողովում լսեցին հետևյալ զեկուցումները.

1. «Կուլտուրայի պատմության ինստիտուտի քրդագիտական աշխատանքները (զեկ. Հ. Ջնդի):

2. «Ֆեոդալական ֆորմացիան քրդերի մեջ մինչ հոկտեմբերյան հեղափոխությունը (զեկ. Ա. Շամիրով):

3. «Ընդհանուր գրական քրդերեն լեզվի պրոբլեմները» (զեկ. Ա. Խաչատրյան):

4. «Քրդերի միասնական ուղղագրությունը՝ կապված քուրդ-լատինական այբուբենի բաբելախության հետ» (զեկ. Ամինե Ավդալ):

5. «Քրդերեն քերականության հիմունքները» (զեկ. Դ. Կուրդուեւ եւ Յուկերման):

6. «Քրդերեն տերմինաբանական շինարարության աշխատանքները» (զեկ. Վ. Պեսայան):

7. «Քրդերենի կուրմանջի րարբատի առանձնահատկությունները (գեկ. Գ. Սեւակ) ¹²։

Գիտաժողովում ելույթներ ունեցան Հայաստանի Գրողների միության քուրդ գրողների սեկցիայի նախագահ Հ. Ջնդին, «Ռյա քուզա» քերթի խմբագիր Ջարդոն Գենջոն, Պետերատի քրդական գրականության Բաժնի վարիչ Ջասըմե Ջալիլը եւ ուրիշներ։ Նրանք անդրադարձան լավ հայ քրդագիտության հարցերին, նշեցին նրա գիտական ու գործնական դերը ողջ քրդագիտության մեջ։

Գիտաժողովիի բացման օրը հանրապետական քերթերում տպագրվեցին հայ մտավորականների ողջույններն ու հողվածները՝ ուղղված գիտաժողովին։ «Նորհրդային Հայաստան» քերթը 1934 թ. հունիսի 9-ի իր 155-րդ համարը ամբողջովին նվիրել էր գիտաժողովին։ Տպագրված էին Հայաստանի կառավարության ողջույնի հեռագիրը, Ա. Շահինյանի «Քրդական կոնֆերանսի առթիվ», Հակ. Ջոռյանի «Քրդական անդրանիկ կոնֆերանսի խնդիրները», Ե. Չուխտյանի «Քուրդ աշխատավորությունն ստեղծում է իր ազգային գրականությունը» հողվածները։ «Նորհրդային Հայաստանը» իր առաջնորդող հողվածում անդրադարձնում էր Հայաստանում քուրդ ժողովրդի առաջընթացին, նշում է, որ այսօր Երեսնում բացվող համամիութենական քրդագիտական գիտաժողովը իր նշանակությամբ դուրս է գալիս մեր հանրապետության սահմաններից։ Այն բացառիկ իրադարձություն է քուրդ ժողովրդի մշակութային կյանքում, Հայաստանի քրդական փոքր համայնքը ունի մշակութային հնարավոր բոլոր պայմանները, իսկ այսօրվա գիտաժողովը հիմք է դնում մի նոր ուղղության՝ քրդագիտության։

Գիտաժողովի բոլոր նիստերին մասնակցում էին հայ գիտնականները եւ հանդես գալիս գիտական զեկուցումներով։ Բազմաբովանդակ էր հատկապես 6-րդ նիստը, որտեղ ելույթ ունեցան հայ անվանի գիտնականներ Հ. Աճառյանը եւ Գ. Ղափանցյանը, որոնք հիմնականում կանգ առան քրդական միասնական գրական լեզվին վերաբերող հարցերին։ Հանդես եկավ նաեւ Համամիութենական ԳԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատող Վիլիելսկին, որը, ինչպես ողջ ինստիտուտի կոլեկտիվի, այնպես էլ ակադեմիկոս Ն. Մսաի անունից, ողջունեց գիտաժողովի աշխատանքները ¹³։

Գիտաժողովում ելույթ ունեցավ նաեւ Ադրբեջանից՝ Չոբան Ջադին, որն իր ելույթը սկսեց հետեւյալ խոսքերով՝ «Ես հիացած եմ այն մշակութային ձեռքբերումներով, որ Հայաստանի քրդերն այսօր ունեն։ Այդ ամենը ապացուցում է, որ Երեսնը լինելու է համայն քրդերի արվեստի, գրականության եւ ընդհանրապես մշակույթի կենտրոնը...» ¹⁴։

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին Անդրեբեկյու-մի կուլտուրայի և պրոպագանդայի Բաժնի վարիչ Բեդիան, Համամիու-

թեմական գիտությունների ակադեմիայի Անդրկովկասյան մասնաճյուղի փոխնախագահ Ա. Գրիգորյանը, Հայաստանի Կենտրոնականի նախագահ Ս. Մարտիրոսյանը, ՀՍԽՀ ժողովրդների նախագահի տեղակալ Ա. Երզնկյանը¹⁵:

Գիտաժողովը ողջույնի հեռագիր ուղարկեց Հայաստանի կառավարությանը: Անդրադառնալով քրդագիտական գիտաժողովի դերին ու նշանակությանը քրդական մշակութային կյանքում, նշում է, որ Հայաստանում քուրդ ժողովրդի վտյուրը հատվածը, ստեղծված այբուբենով, այսօր առաջ է մղում քրդական գրականությունը: Միայն 1933–34 թ. թ. Հայաստանում հրատարակվել է 56 ամուն գիրք: Քրդերը չունեին դպրոցներ, այժմ Անդրկովկասում գործում է 88 դպրոց: Արդեն հինգերորդ տարին է, որ Երևանում հրատարակվում է քրդական թերթ եւ չորրորդ տարին է, որ գործում է աշխարհում միակ քրդական Անդրկովկասյան մանկավարժական տեխնիկումը: Դպրոցական շինարարությունը, անգրագիտության վերացումը, քրդական գրականության ստեղծումը եւ այլն, զգալի չափով բարձրացրել են քրդերի կուլտուրայի մակարդակը¹⁶:

Կոնֆերանսը ողջույնի հեռագիր հղեց անձամբ ՀԿ/ԲԿ Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Ա. Խանջյանին, որի մեջ կոնֆերանսի մասնակիցները ողջ քուրդ ժողովրդի անունից իրենց երախտագիտական խոսքն էին հղում հայ ժողովրդին այն վիթխարի աշխատանքի համար, որ կատարել է Հայաստանը քրդերի տնտեսական ու կուլտուրական շինարարության ասպարեզում¹⁷: Կոնֆերանսը ընդունեց բազմաթիվ որոշումներ, որոնցից մեկը, որ նշվում էր, որ Հայաստանը համարվում է նաև ողջ քուրդ ժողովրդի մշակութային կենտրոնը, քուրդ ժողովուրդը հայ մտավորականության անմիջական օգնությամբ էլ ավելի առաջ կմղի իր մշակույթը¹⁸:

Գիտաժողովը իր աշխատանքներն ավարտեց հուլիսի 15–ին: Այն հիմնականում քննարկեց քրդական գրական միասնական լեզվի խնդիրը, քրդերեն լեզվի ուղղագրության, նոր մշակված քերականություն ստեղծելու հարցերը: Անդրադարձավ քրդերենի տերմինաշինության ու բառակազմության, քուրդ ժողովրդի պատմության, ազգագրության, բանահյուսության խնդիրներին: Որոշվեց քրդական միասնական լեզու ճանաչել ներկայումս Խորհրդային Հայաստանում ապրող քրդերի (կուրմանջի) բարբառը: Սիեմույն ժամանակ որոշվեց համամիութենական քրդագիտական երկրորդ գիտաժողովը հրավիրել 1935 թվականին Ադրբեջանում, իսկ Հայաստանի պետական համալսարանում հիմնել քրդագիտության ամբիոն¹⁹:

Որոշ ուշացումով, 60–ական թվականներին Հայաստանի պետական համալսարանում բացվեց քրդագիտության բաժին, որտեղը ուսանողները խորանում էին քրդերեն լեզվի, գրականության, բանահյուսության

յան, պատմության, ազգագրության հարցերի մեջ: Իսկ համամիութենական քրդագիտական երկրորդ գիտաժողովի հրավիրումը Ադրբեջանում ոչ միայն չկայացավ, այլև Ադրբեջանում մինչ այդ էլ ընթացող ուժացման քաղաքականությունն էլ ավելի գլուխ բարձրացրեց:

Ցանկանում ենք կանգ առնել մի պատմական պարզ ու կարեւոր իրողության վրա: Եթե Հայաստանում 1921 թվականի մարդահամարով 8 455 քրդեր էին բնակվում, ապա 1979 թ. մարդահամարով նրանց թիվը կազմում էր մոտ 70 000, որոնց համար, ըստ էության, ստեղծված էր մշակութային ավտոնոմիա:

1926 թ. Ադրբեջանում քրդերի թիվը կազմում էր 41. 000 եւ կային մի քանի քրդական մշակութային օջախներ, իսկ 1939 թվականի մարդահամարով քրդերի թիվը Ադրբեջանում կազմում էր 6. 000, վերանում են քրդական բոլոր մշակութային օջախները, այդ թվում նաև Լաչինի քրդական մարզը: Արդեն 1959 թ. մարդահամարով ցույց է տրված 1. 5 հազար քուրդ, իսկ 1979 թվականի մարդահամարի տվյալներով Ադրբեջանի Հանրապետությունում արդեն քրդեր չկային:

Անդրադառնալով գիտաժողովի աշխատանքներին, պետք է նշենք, որ այն ընտրեց հատուկ հանձնաժողով (պրոֆեսոր Ա. Խաչատրյան, Ա. Շամիլով, Հ. Ջնդի, Ղ. Կուրդուեւ, Օ. Լ. Վիլչիսկի, Ի. Ի. Յուկերման, Խ. Փեկիլի), որը պետք է կազմեր քրդերեն լեզվի գիտական ու դպրոցական քերականություն²⁰: Հետագայում պրոֆեսոր Հ. Ջնդու ու Ա. Խաչատրյանի նախաձեռնությամբ կազմվեց այդ քերականությունը: Այնուհետեւ որոշվեց մոտ 50 մամուլ ծավալով հրատարակել քրդական բանահյուսություն, հայ-քրդերեն բառարան, որոնք կարճ ժամանակաընթացքում հրատարակվեցին:

Ելնելով այս ամենից, պետք է նշենք, որ գիտաժողովը հանդիսացավ ոչ միայն քուրդ ժողովրդի մշակութային կյանքում շրջադարձային մի կետ, որ ամփոփեց և ի մի բերեց Հայաստանում այն խռոշագույն հաղթանակները, որոնք քուրդ համայնքը վերջին տարիներին ձեռք էր բերել մշակույթի բնագավառում, այլեւ այն քաղաքական մի մեծ իրադարձություն էր համայն քուրդ ժողովրդի կյանքում, որին անդրադարձան ու գնահատեցին արաբերկրի բազմաթիվ գիտնականներ: Այն ուղի հարթեց քրդերեն գրական լեզվի ստեղծման ու առաջընթացի համար:

Գիտաժողովից հետո մեր թափ հաղորդվեց քրդական ազգային մշակույթի, հատկապես քրդագիտության զարգացմանը: Հայ քրդագիտության կենտրոն դարձավ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտը, որտեղ տնօրեններ՝ ակադեմիկոսներ Մ. Ներսիսյանի, Գ. Սարգսյանի, պրոֆեսորներ Հ. Ինճիկյանի, Ն. Հովհաննիսյանի ջանքերով օրեցօր ընդլայնվում էր և այժմ զարգանում է քրդագիտության ոլորտը:

Լեւինգրադում, Մոսկվայում ու Եվրոպական գիտական կենտրոններում թեև նույնպես զբաղվում են քրդագիտության հարցերով, սակայն հայ քրդագիտությունը իր մեջ ընդգրկում է քրդագիտությանը վերաբերող բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումով գիտական աշխարհում այն դարձել է մի նոր ուղղություն եւ տվել իր գործնական բեղմնավոր պատուհները ողջ քուրդ ժողովրդի մշակութուն:

KARLEN CHACHANI

FROM THE HISTORY OF THE ARMENIAN KURDISH STUDIES
(The first kurdological conference)

In the article there are discussed the role and meaning of the Armenian government and the Armenian intelligentsia in the cultural life of the Kurdish people, which brilliantly expressed at All-union Kurdish Studies conference in Yerevan (July 1934).

This conference was a historical turning point in the cultural life of the Kurdish people, it concluded and gathered the most great victories of the Kurdish community in Armenia, which it achieved during several years at the cultural sphere.

At last, the conference opened ways to the diverse discussion of the Kurdological issues and the Armenian Kurdish studies gave a new breath to the whole Kurdish studies. After the conference due to the concerns of the Armenian intelligentsia the Kurdish studies received a new thrust for its development, which has got a broad recognition in the whole scientific world.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խ. Աբովյան, երկերի լիակատար ժողովածու, հ. VIII, Երևան, 1958: Մ. Տիգրանյան, Ալիֆայենիզ Գուրմանջի վա արմանի, Կ. Պոլիս 1860: Մ. Տիգրանյան, Չըրայե ըռոնի Կ. Պոլիս 1866: Խրիմյան Հայրիկ, Ծրագիր քարենորոգման, 1909, Կ. Պոլիս: Յ. Շահպազյան, Քիւրդո-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911: Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, Երևան, 1947: С. Е. Егиазаров, Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, Тифлис, 1909. К. Юзбашян. И. А. Орбели. Ленинград, 1965.
2. Заря Востока, Тбилиси, 1933, No 184.
3. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 1, ց. 22, գ. 301, էջ 115-117:
4. «Այա քազա», 1934, No 28:
5. Նույն տեղում, No 30:
6. Նույն տեղում, No 31:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում, No 32:
10. Նույն տեղում:

11. «Արորհրդային Հայաստան», 1934, No 155:
12. Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Ֆ. կաթողիկոսական դիվան, թղթ. 76, վ. 56:
13. «Արորհրդային Հայաստան», 1934, No 160:
14. ՀՀ ՆՊԿ արխիվ, ֆ. 112, ց. 4, գ. 786, էջ 14-15:
15. «Արորհրդային Հայաստան», 1934, No 160:
16. Նույն տեղում, No 161:
17. Նույն տեղում, No 161:
18. «Ռյա թագա», 1934, No 32:
19. «Արորհրդային Հայաստան», 1934, No 163:
20. Նույն տեղում, No 164: